

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հունիսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից մինչև 1 աստիճանով, տեղ-տեղ՝ նույնքանով ցածր:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 13-ին, 14-ին. Տավուշում +31...+33^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +25...+27^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +35...+37^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +33...+36^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +27...+30^{0}C, Շիրակում՝ +25...+29^{0}C (Աշոցք՝ +23^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +25...+29^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, Գեղարքունիքում՝ +23...+28^{0}C, Լոռիում՝ +26...+30^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +34...+36^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +23...+25^{0}C, նախալեռներում՝ +28...+30^{0}C (Աշտարակում՝ +34^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 18-ին. Շիրակում՝ +1...+5^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +4...+6^{0}C (Հանքավան՝ 1^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +8...+10^{0}C, Տավուշում +9...+11^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +3...+5^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +10...+12^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +12...+17^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +4...+9^{0}C, Գեղարքունիքում՝ +2...+7^{0}C (Գավառ՝ +1^{0}C), Լոռիում՝ +3...+8^{0}C (Տաշիր՝ +1^{0}C), Արմավիրում, Արարատում՝ +10...+14^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +1...+4^{0}C, նախալեռներում՝ +9...+11^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 13-40մմ (48-167%), Լոռիում՝ 39-51մմ (84-159%), Տավուշում՝ 41-49մմ (146-268%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 24-29մմ (89-121%), նախալեռներում՝ 2-12մմ (17-71%), Գեղարքունիքում՝ 2-28մմ (10-85%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 4-23մմ (20-92%), նախալեռներում՝ 2մմ (15%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 2մմ (10%), նախալեռներում՝ 2մմ (13%), Արմավիրում՝ 7մմ (88%), Արարատում՝ 0.2-0.3մմ (2-4%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 7մմ (39%), նախալեռներում՝ 1-16մմ (6-90%): Ուրցածորում, Մերձավանում և Մեղրիում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը, իրականացվել են դաշտային աշխատանքներ:

Լեռնային շրջաններում հացահատիկային մշակաբույսերը գտնվել են հասկակալման և ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման, նախալեռներում՝ ծաղկման, հովտային շրջաններում՝ մոմային հասունացման, տեղ-տեղ՝ լրիվ հասունացման փուլերում:

Հովտային շրջաններում շարունակվել է կորիզավորների մասսայական բերքահավաքը, դաշտերում և այգիներում կատարվել է հերթական վեգետացիոն ոռոգում, նախալեռներում սկսվել է պտղատուների հասունացումը, ձևավորվել են խաղողի ողկույզները:

Արարատյան դաշտում բանջարանոցային մշակաբույսերը շարունակել են գտնվել ծաղկաբույլերի և ծաղիկների թառամման, նախալեռնային շրջաններում՝ կողային ընձյուղների, իսկ լեռնային շրջաններում՝ առաջին և երրորդ տերևները:

Դիտված տեղումները բարձրացրել են հողի արդյունավետ խոնավության պաշարները: